Արձանագրություն N 3

ՋԿ-ԳՀԾՁԲ-22/11-Տ **ծածկագրով ընթացակարգի**

գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 26 սեպտեմբերի 2022թ.

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Վ. Օհանջանյանը,

Հանձնաժողովի անդամներ Գ. Մելիքսեթյանը, Ս. Ասրյանը, Ն. Ավետյանը, Կ. Սարգսյանը և Ս. Ալեքսանյանը:

Քարտուղար՝ Ա. Սարգսյանը:

Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը

1. «**ՋԿ-ԳՀԾՁԲ-22/11-Տ** » ծածկագրով ընթացակարգի վերաբերյալ:

Հայտերի բացման մասին

Ջրային կոմիտեի կարիքների համար Բուսաբանական այգու ոռոգման ցանց Սարկավագի փողոցի վրայի ջրանցքից մինչև Բուսաբանական այգու պարսպի հատվածում՝ ոռոգման խողովակաշարերի կառուցման աշխատանքների կատարման որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՋԿ-ԳՀԾՁԲ-22/11-Տ» ծածկագրով ընթացակարգի հայտերը էլեկտրոնային ձևով www.armeps.am կայքի միջոցով բացվել են 2022 թվականի օգոստոսի 29-ին, ժամը 15:30-ին /հրապարակումը 19.08.2022թ./:

Գնման ընթացակարգը կազմակերպվել է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն:

Քննարկում

Լրացուցիչ ուսումնասիրության արդյունքում, պարզ է դարձել, որ «ՋԿ-ԳՀԾՁԲ-22/11-Տ» ծածկագրով ընթացակարգի մասնակից «ՌԻՋԻԴ», «ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ-ների և Ա/Ձ Արտակ Մարտիրոսյանի կողմից հրավերով պահանջվող «Ոչ գնային պայմանների գնահատման չափանիշները» ներկայացվել են ARMEPS համակարգի՝ «տեխնիկական» բաժնում, որը հանձնաժողովի կողմից 07.09.2022թ. գնահատող հանձնաժողովի նիստում չի դիտարկվել:

Հայտերի ամբողջական փաթեթների գնահատման և ամփոփման նպատակով հանձնաժողովը 14.09.2022թ. հրավիրել է արտահերթ նիստ, որին մասնակցում էին «ՌԻՋԻԴ» ՍՊԸ-ի տնօրեն Հ. Վարդանյանը, «ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ-ի տնօրեն Խ. Այվազյանը և Ա/Ձ Արտակ Մարտիրոսյանը:

Հանձնաժողովի որոշումը

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 26-րդ կետի 7-րդ ենթակետը և պատվիրատուի ղեկավարի 19.09.2022թ. թիվ 322-Ա հրամանը գնահատող հանձնաժողովը.

1. մասնակից ընկերությունների կողմից ARMEPS համակարգի՝ «տեխնիկական» բաժնում ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության նպատակով 22.09.2022թ. ժամը 16:00-ին հրավիրել է արտահերթ նիստ: Ուսումնասիրելով մասնակից ընկերությունների կողմից ներկայացված փաստաթղթերի փաթեթները արձանագրել է, որ

Ա/Ձ Արտակ Մարտիրոսյանի կողմից ներկայացված «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթղթերը թերի են՝ Հավելված 3-ի <<գործունեության ոլորտը և կատարած աշխատանքը>> սյունակում անհրաժեշտ է լրացնել մասնագետների կողմից կատարված աշխատանքները ըստ հրավերով սահմանված համապատասխան ոլորտի, ինժեներ-հիդրոտեխնիկ՝ Գագիկ Մադաթյանի անձնագիրը վավերական չէ: «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը ներկայացված չեն «ՋԿ-ԳՀԾՁԲ-22/11-Տ» ծածկագրով հրավերի 8.18 կետի պահանջների համապատասխան, ինչպես նաև Ա/Ձ Արտակ Մարտիրոսյանի կողմից ներկայացված Մասնագիտական փորձառություն չափանիշը հիմնավորող նմանատիպ պայմանագրի հիդրոտեխնիկական մասը չի բավարարում հայտով սահմանված գնային առաջարկի առնվազն 50% -ի պահանջին:

«ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթղթերը թերի են՝ Հավելված 3-ի <<գործունեության ոլորտը և կատարած աշխատանքը>> սյունակում անհրաժեշտ է լրացնել մասնագետների կողմից կատարված աշխատանքները ըստ հրավերով սահմանված համապատասխան ոլորտի, ինժեներ-շինարար՝ Արթուր Սարգսյանի կացության քարտը վավերական չէ: «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման (Արթուր Սարգսյանի մասով) չափանիշները հիմնավորող փաստաթղթերը ներկայացված չեն «ՋԿ-ԳՀԾՁԲ-22/11-Տ» ծածկագրով հրավերի 8.18 կետի պահանջների համապատասխան

Հիմք ընդունելով «ՋԿ-ԳՀԾՁԲ-22/11-Տ» ծածկագրով հրավերի 8.18 կետը (Հանձնաժողովի և (կամ) պատվիրատուի կողմից էլեկտրոնային ծանուցումներն ուղարկվում են համակարգի միջոցով, իսկ մասնակցի կողմից՝ իր հայտում նշված էլեկտրոնային փոստից սույն հրավերում նշված՝ հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստին ուղարկվելու միջոցով: Տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում մասնակիցը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որի հավաստագիրը պետք է զետեղված լինի «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում, կամ տեղեկությունները (փաստաթղթերը) ուղարկում է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:) անհաժեշտ է տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատել էլեկտրոնային եղանակով կամ տեղեկությունները (փաստաթղթերը) ուղարկել հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

Նշված անհամապատասխանությունների մասին 22.09.2022թ. ծանուցվել է մասնակից ընկերություններին:

23.09.2022թ. սահմանված կարգով մասնակից ընկերությունները շտկել են անհամապատասխանությունները, բացառությամբ.

Ա/Ձ Արտակ Մարտիրոսյանի կողմից ներկայացված Մասնագիտական փորձառություն չափանիշը հիմնավորող նմանատիպ պայմանագրի հիդրոտեխնիկական մասը չի բավարարում հայտով սահմանված գնային առաջարկի առնվազն 50% -ի պահանջին:

Հանձնաժողովը որոշեց

1. Ուժը կորցրած համարել «ՋԿ-ԳՀԾՁԲ-22/11-Տ» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 07.09.2022թ. որոշումները:

2. Հիմք ընդունելով ՋԿ-ԳՀԾՁԲ-22/11-Տ ծածկագրով հրավերի 8.10 կետը Ա/Ձ Արտակ Մարտիրոսյանի կողմից Չափաբաժին 1-ի համար ներկայացված հայտը մերժել:

3. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 40-րդ կետի 5)-րդ ենթակետը, ինչպես նաև ՋԿ-ԳՀԾՁԲ-22/11-Տ ծածկագրով ընթացակարգի հրավերի 8.6 և 8.7 կետերը հանձնաժողովը հրավերի մասնակից «ՌԻՋԻԴ» և «ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ-ներին հրավիրում է գնի նվազեցման շուրջ բանակցությունների, որը տեղի կունենա 28.09.2022 թվականին ժամը 11:30-ին, Ջրային կոմիտեի շենքում (ք. Երևան, Վարդանանց 13ա, նիստերի դահլիճ):

Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ըստ անհրաժեշտության, որը տեղի կունենա Ջրային կոմիտեի վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Վարդանանց 13ա:

Ընդունվել է որոշում՝ կողմ-6, դեմ-0

Նախագահ		Վ. Օհանջանյան
		Ս. Ասրյան
անդամներ		Գ. Մելիքսեթյան
		Կ. Սարգսյան
		Ն. Ավետյան
		Ս. Ալեքսանյան
Քարտուղար		Ա. Սարգսյան